

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Գ.Մ. Արզումանյան

Դատավարական իրավունքի ճյուղերի հանդիսացող քաղաքացիական դատավարությունը և քրեական դատավարությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլանով նախատեսված հիմնական ուսումնական դասընթացներից են /Վարչական դատավարությունը ուսումնական պլանով դեռևս չի նախատեսված/: Քաղաքացիական դատավարության իրավունքը իրավական նորմերի համակցություն է, որոնք կարգավորում են քաղաքացիական գործերի քննության և լուծման /արդարադատության իրականացման/ ընթացքում դատարանի և դատավարության մյուս մասնակիցների գործողությունները, ինչպես նաև այդ գործողությունների հետևանքով կազմավորվող հասարակական հարաբերությունները, իսկ քրեական դատավարության իրավունքը կարգավորում է քրեական գործեր քննելիս և լուծելիս առաջացող հասարակական հարաբերությունները: Պետք է նշել, որ դատավարությունն ընդիանրապես դիտարկվում է իրեւ արդարադատության իրականացման կազմ, իսկ քրեական դատավարությունը դատավարության մյուս ճյուղերից տարբերվում է մինչդատական մի շարք փուլերի առկայությամբ:

Քաղաքացիական դատավարության իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմնական /առանցքային/ օրենսդրական ակտը /ադրյուր/ և ուսումնափրաման օբյեկտը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերն են, որոնք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել են 2008թ. դեկտեմբերի 17-ին, ուժի մեջ են մտել 2009թ. վենտրվարի 10-ից: Դրանք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության առաջին օրենսգրքերն են, որոնք ամրողովին նվիրված են քաղաքացիական և քրեական գործերով դատավարությանը և մանրամասնորեն կարգավորում են այն: Միաժամանակ ընդունվել են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրքը/կարգավորում է վարչական գործերով դատավարությունը/ ու ԼՂՀ դատական օրենսգիրքը/կարգավորում է դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները: Այդ օրենսգրքերի ընդունումը անկախ պետականության հաստատման, երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների ու հիմնական օրենքի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության ընդունման արդյունք են և նշանափորում են դատավարական իրավունքի քնազավառում դատավարական բարեփոխումների իրացումը:

Ուսանողների կողմից դատավարական իրավունքի ճյուղերի դասընթացների յուրացումը ապագա դատավորների, դատավագների, քննչների, փաստաբանների, իրավախորհրդատունների, նոտարների, հարկադիր կատարողների, պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետների ձևավորման անհրաժեշտ պայման է հանդիսանում:

Դատավարական իրավունքի ճյուղերն ուսումնափրաման ուսանողները պետք է կարողանան տեսական գիտելիքները կիրառել պրակտիկայում, կազմել դատավարական փաստաթղթեր, հստակ պատկերացնում ունենալ դատավարության տարբեր սուբյեկտների դերի, իրավունքների, պարտականությունների և կոնկրետ գործունեության, նրանց ներկայացվող պահանջների մասին՝ ինչպես իրավական, այնպես էլ բարոյական:

Դատավարական իրավունքից կուրսային աշխատանքը և մագիստրոսական թեսուն ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ են, որոնք պետք է համապատասխանեն գիտական հանրությունում ընդունված հիմնական պահանջներին ու չափանիշներին, ինչը ենթադրում է մեթոդաբանական սկզբունքների պահպանում: Ուսանողի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը բարձրագույն կրթության համակարգում ուսումնական

ծրագրերի, գիտելիքների ստուգման և որակավորման շնորհման չափանիշների հիմնական բաղադրիչ մասն է:

Արդյունավետ գիտական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ օրինակելի աշխատանքային պլան հետևյալ կառուցվածքով.

Գործողություններ	Ժամկետը	Նշումներ՝ կատարման բայլերի մասին
1.Նորմատիվ ակտերի, մասնագիտական գրականության, դատական պրակտիկայի ընտրություն և վերլուծություն		
2.Վնտազութության ծրագրի կազմում		
3.Մեթոդների ընտրություն		
4.Աշխատանքի շարադրում, ձևավորում և խմբագրում		

Ներկայացվող գիտահետազոտական աշխատանքը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

1. Տիտղոսաթերթը.
2. Բովանդակություն.
3. Ներածություն.
4. Աշխատանքի հիմնական մաս.
5. Եզրակացություն (կամ վերջաբան).
6. Գործնական առաջարկներ (անհրաժեշտության դեպքում).
7. Գրականության ցանկ.
8. Հավելված (անհրաժեշտության դեպքում):

Տիտղոսաթերթը ձևավորվում է հաստատված պահանջներին համապատասխան:

Բովանդակության մեջ ցույց է տրվում աշխատանքի կառուցվածքը /ներածություն, գլուխների և պարագրաֆների վերտառություն, եզրակացություն, գրականություն/՝ նշելով էջերը:

Ներածության մեջ ցույց է տրվում հետազոտության թեմայի արդիականությունը, գրականության մեջ մշակվածության աստիճանը, աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, կիրառված մեթոդները: Թեմայի արդիականությունը պետք է շարադրվի դատավարական իրավունքի համապատասխան բնագավառում տեսական և գործնական հիմնախնդիրների ցույց տրման միջոցով:

Աշխատանքի հիմնական մասը, որպես կանոն, կազմված է լինում երեք գլուխներից, որտեղ բացահայտվում են աշխատանքի հիմնախնդիրները:

Եզրակացության մեջ շարադրվում են կատարված հետազոտության հիման վրա արված հետևողությունները և առաջարկությունները. դրանք պետք է համապատասխան ներածության մեջ ցույց տրված նպատակներին ու խնդիրներին:

Գրականության ցանկում ցույց են տրվում աշխատանքը կատարելիս օգտագործված աղբյուրները: Ակզեռում նշվում են նորմատիվ ակտերը /ըստ իրավաբանական ուժի և փաստաթղթի ընդունման տարեթիվի/ ու դատական պրակտիկան, ապա մասնագիտական գրականությունը՝ այլընական կարգով:

Գրականության աղբյուրի ներկայացման համար նշվում է հետևյալ անհրաժեշտ տեղենկատվությունը՝ հեղինակի ազգանունը, անվան և հայրանունը սկզբնատառները, գրքի անվանումը, իրատարակման վայրը, տպագրության տարեթիվը, էջերի քանակը:

Աշխատանքին կարող են կցվել սխեմաներ, աղյուսակներ, դատավարական փաստաթղթերի ձևանմուշներ, որոնք լուսաբանում են աշխատանքի բովանդակությունը: Աղյուսակները պետք է լինեն պարզ ու հարմար՝ տեսքում տեղադրելու համար:

Գիտական գրականության ուսումնասիրության ժամանակ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել դատավարական իրավունքի տեսության և պրակտիկայի վիճելի հարցերին: Երաշխափորվում է ձևակերպել սեփական փաստարկված կարծիքը:

Հետազոտված հիմնախնդիրները և արված հետևողունները պիտք է լուսաբանվեն քաղաքացիական և քրեական գործերով դատական պրակտիկայից վերցված օրինակներով:

Գիտական աղբյուրներից բերված մեջբերումները, վիճակագրական տվյալները և մյուս նյութերն ուղղեցվում են հղումներով: Տերսոր մեջբերումներով ծանրաբեռնելին անցանկալի է: Մեջբերումներն անհրաժեշտ է կատարել միայն այն դեպքերում, եթե այս կամ այն լուսաբանման համար իրեն փաստարկ է հանդիսանում կամ հանդիսանում է քննադատության օբյեկտ:

Նյութը շարադրվում է գիտական ոճով:

Լուսանցքներում և տողերի արանքում ավելացումներ չի թույլատրվում:

Տերսորում կրծատումներ չեն թույլատրվում՝ բացառությամբ հանրածանաչների /օրինակ՝ հեղինակ՝ հեղ., քաղաք՝ ք. և այլն/:

Ծարվածքի տառատեսակը ցանկալի է,որ լինի Arial Armenian, տառաչափը՝ 12:

Կուրսային աշխատանքները կատարվում են բակալավրիատի ուսման 3-րդ կուրսում: Կուրսային աշխատանքի թեման ընտրում է ուսանող՝ ամբիոնի կողմից հաստատված թեմատիկայի շրջանակներում: Կուրսային աշխատանք գրելու համար ուսանողին տրվում է մեկ կիսամյակ ժամանակահատված: Դասախոս-դեկանավարը կուրսային աշխատանք գրելու համար ուսանողին տրամադրություն է աշխատանքի պլան, համապատասխան ուղղություն ու խորհուրդներ:

Կուրսային աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի 25-30 էջը:

Կուրսային աշխատանքը կարող է համարվել լիարժեք, եթե՝

- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը և խնդիրները.
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն.
- տրված են ինքնուրույն մեկնաբանություններ, կատարված են ընդհանրացումներ, պահպանված են հղումների կատարման կանոնները.
- նշված են օգտագործված մեթոդները, հիմնավորված է այդ մեթոդների ընտրությունը.
- եզրակացությունները հիմնավորված են և հստակ ձևակերպված:

Մագիստրոսական թեզը կատարվում է մագիստրատուրայում ուսման երկու տարիների ընթացքում: Թեման հաստատվում է ուսման առաջին կիսամյակում՝ աշնանը: Աշխատանքում ուսումնախորհությունը հիմնախնդիրը պետք է համապատասխանի մագիստրատուրայի մասնագիտացման ուղղությանը: Թեզը պետք է ունենա որոշակի գիտական նշանակություն և ներդրում դատական բնագավառում, որը պայմանավորված է ուսումնասիրման նորույթով, տեսական և կիրառական նշանակությամբ: Դատավարական իրավունքից մագիստրոսական թեզը պետք է հիմնվի գիտական և ուսումնական գրականության, դասագրքների, ուսումնական ձեռնարկների, առենախոսական հետազոտությունների, պարբերական հրատարակություններում /«Օրենք և իրականություն», «Դատական իշխանություն», «Իրավագիտության հարցեր», «Պնտություն և իրավունք», «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» և այլն/ հրապարակված գիտական հոդվածների, նորմատիվ-իրավական ակտերի, դատական արքակիության նյութերի, օրենսդրության օարգացման միտումների վերլուծության վրա: Խորհուրդ է տրվում օգտագործել կրնկրես գործերով «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր»-ում և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր»-ում հրապարակված Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերազույն դատարանի որոշումները: Ցանկալի է, որ աշխատանքը կրի վիճաբանության բնույթ՝ հիմնախնդիր սեփական ընկալման ու դրա լուծման նդանակների շարադրմամբ: Առանձին հեղինակների հետ բանավեճը հիմնված պետք է լինի օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծության վրա:

Մագիստրոսական աշխատանքի ծավալը կազմում է 50-60 էջ:

Էջադրումը կատարվում է 3-րդ էջից:

Տիտղոսաթերթը /1-ին էջ/ և բուհանդակությունը /2-րդ էջ/ չեն համարակալվում:

Թեզը համարվում է լիարժեք կատարված, եթե՝

- հստակ նշված և հիմնավորված է ուսումնասիրման արդիականությունը.
- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը.
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն, տրված են ինքնուրույն մեկնաբանություններ, կատարված են ընդհանրացումներ, պահպանված են հղումների կատարման կանոնները.
- հիմնավորված է կիրառվող մեթոդների ընտրությունը.
- եզրակացությունները հիմնավորված են և հստակ ձևակերպված:

Հետազոտական տեսատերում այլ հեղինակի կարծիքների, դատողությունների բառացի և վերապատմված մեջբերումները պարտադիր պետք է ունենան համապատասխան հղում, յեն որ հեղինակի, որ գրքի, որ էջից կամ մասունքի որ համարից են դրանք բաղկած:

Գիտական աշխատանքում նաև առանձին բառեր, մտքեր երբեմն կարիք են ունենում լրացուցիչ բացատրության, ծանոթագրման, որն արփում է տեսատից դուրս՝ էջի տակ կամ էջի վերջում:

Գոյություն ունի հղումների, մեջբերումների և ծանոթագրությունների մշակված միասնական կարգ, որը պետք է պահպանել:

-Մեջբերումը կամ բաղկացնելը տեսատում ուրիշի խոսքի բառացի օգտագործումն է:

Մեջբերումները կատարվում են՝

ինչպես ուղղակի (առանց փոփոխության, չակերտմելի մեջ), այնպես էլ անուղղակի (առանց չակերտմելի):

-Ուղղակի մեջբերման ժամանակ չի կարելի մեջբերվող հատվածից բաց թողնել որևէ բառ կամ բառակապակցություն, դարձվածք կամ նախադասություն, որը կարող է փոխել ու արավադել մտքի իմաստը: Մտքի իմաստը չփոխության առանձին բառերի կամ դարձվածքների սղման ժամանակ դրանց փոխարեն դրվում է բազմակետ:

-Նոյն չակերտմելի մեջ չի կարելի առնել գրքի տարբեր նախադասություններից, տարբեր էջներից բաղկած մեջբերումները. դրանք չակերտմելի մեջ են առնվում առանձին-առանձին:

-Չակերտմերով մեջբերվող նախադասությունը սկսվում է մեծատառով, եթեն նոյնիսկ այն կրճատված նախադասության նրկորորդ կեսն է /կրճատված մասի փոխարեն դրվում է բազմակետ/:

-Մեծատառով չի գրվում, եթեն մեջբերված հատվածը բնրականորեն դառնում է հեղինակի խոսքի, նախադասության շարունակություն:

Եթեն դրվում են կլոր փակազներ, ապա փակազների մեջ նշվում է հեղինակի ազգանունը, անվան առաջին տարը, գրքի տարեթիվը և էջը:

## Գրականություն

1. Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևանի համալսարանի իրատարակչություն, Եր., 2007:
2. Гражданское процессуальное право. Практикум. Под редакцией Г.А.Жилина. «ВЕЛБИ». М., 2006.

## Резюме

Курсовая работа по процессуальному праву представляет собой самостоятельное исследование, в котором студент демонстрирует полученные теоретические знания, практические навыки, способность проводить анализ научной литературы, судебной практики, умение формулировать и обосновывать собственную точку зрения. Магистрантская работа по процессуальному праву представляет собой исследование одной из актуальных проблем процессуального права, в котором магистрант демонстрирует уровень овладевания теоретическими знаниями и практическими навыками, позволяющими ему самостоятельно решать профессиональные задачи.

Работа должна основываться на научной и учебной литературе, учебных пособиях, диссертационных исследованиях, на научных статьях, опубликованных в периодических изданиях («Судебная власть», «Судебная власть Арцаха», «Вопросы правоведения», «Государство и право», «Ученые записки АрГУ», «Право и действительность»), на нормативно-правовых актах, на материалах судебной практики.